ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 դեկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

180
(2846)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՄՈՒՍԻՆԸ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ Է ԲԱՑԵԼ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Էմմա Պալյանի ամուսինը՝ Ալբերտ Մարտիրոսյանը, Գյումրի քաղաքը սպասարկող «Գյումրի ավտոբուս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների լվացման կետ է բացել: «Ժողովուրդ» օրաթերթն ահազանգ է ստացել, որ քաղաքապետարանին, բուժհաստատություններին պատկանող ավտոմեքենաները, հրահանգված է, ՔՊ պատգամավորի ամուսնու լվացման կայանում լվանալ:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով կապվեց պատգամավոր Էմմա Պալյանի հետ՝ պարզելու՝ արդյոք այս տեղեկությունները ճիշտ են, թե ոչ, եւ ինչու է նրա ամուսինը միշտ արտոնյալ:

«Հիմա ամուսինս աշխատում է «Հայ անտառ» ՊՈԱԿ-ում: Ես ապշում եմ նման վառ երեւակայության վրա: Որեւէ նման ինֆորմացիա չկա, որ պարտադրանք լինի, այն էլ՝ հիվանդանոցների: Նման պարտադրանք չկա: Ես իմ ամուսնու գործունեությամբ այդքան չեմ զբաղվում, բայց ձեր նշածը բացարձակ սուտ է. նման պարտադրանք չկա, չի կարող լինել»:

Նկատենք, որ Էմմա Պալյանը ոչ մի կերպ չհերքեց ամուսնու՝ ավտոլվացման կետ ունենալու հանգամանքը, իսկ պետական պաշտոն եւ բիզնես համատեղելիությունը լրիվ անօրինական է, ինչի մասին ԱԺ-ում հարցախեղդ էր անում ՔՊ-ն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանին:

Հիշեցնենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր՝ ՔՊ-ական Էմմա Պալյանը աշխատանք չունեցող ամուսնուն իրեն օգնական է նշանակել: ՔՊ պատգամավորը պարզաբանել էր. «Իմ ամուսինը հասարակական հիմունքներով օգնական է գրանցված միայն այն պատճառով, որ ես մարզից ընտրված պատգամավոր եմ, հաճախ եմ լինում Շիրակի մարզում եւ Գյումրիում, եւ երբ տեղափոխվում եմ Երեւան, իմ ամուսինն է ինձ բերում ԱԺ: Որպեսզի շենքի դրսում չսպասի, դա իրեն հնարավորություն է տալիս մուտք գործել ԱԺ շենք եւ իմ աշխատասենյակում սպասել, մինչեւ ես աշխատանքս ավարտեմ, եւ միասին վերադառնանք մարզ կամ այլ գործի»:

Դիկոլ Փաշինյանը որոշել է մաքրել իր թիմը: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրներն են փոխանցում, Փաշինյանը հրահանգել է հնարավորինս սեղմ ժամկետում ազատվել բոլոր այն պաշտոնյաներից, անգամ՝ ոչ բարձրաստիճան, որոնք ՔՊ անդամ չեն, կուսակցության գաղափարները չեն կիսում եւ համարձակվում են չեզոքություն պահպանել: Ընդ որում՝ Փաշինյանը հրահանգել է ազատվել բոլոր ոլորտներում՝ կլինի դա կրթություն, առողջապահություն, սպորտ, թե անգամ մանկապարտեզի կամ դպրոցի տնօրեն. նրանք ովքեր ՔՊ անդամ չեն, հլու-հնազանդ համակիրը չեն, ուրեմն կառավարման ոլորտում տեղ չունեն: Օրերս Երեւանի քաղաքապետարանից հայտնել էին, որ 11 մանկապարտեզների տնօրեններ ազատվել են աշխատանքից: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, սրա հիմնական պատճառն էլ եղել է այն, որ տնօրենները ՔՊ-ական չեն եղել: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Հայաստանը «ժողովրդավարության բաստիոն» հռչակած թավշյահեղափոխականները ոչ մի քննադատություն կամ ընդդիմադիր խոսք, այլակարծություն չեն հանդուրժում:

Դեկտեմբերի 13-ին Ղազախ-Իջեւան սահմանին Հայաստանն ու Ադրբեջանը գերիների փոխանակում իրականացրին: Ադրբեջանը վերադարձրեց 32 հայի, իսկ Հայաստանը՝ 2 ադրբեջանցու: Գերիների վերադարձի գործընթացից հետո համացանցում եւ հանրության շրջանում բուռն քննարկվեց նաեւ այն, որ սահմանին գերիների փոխանակումն իրականացնելու գործընթացը լուսաբանում էին միայն ադրբեջանական լրատվամիջոցները, իսկ հայկական ՁԼՄ-ներն այնտեղ չէին: Մինչ ադրբեջանական պետական լրատվամիջոցները մեծ շուքով լուսաբանում էին գործընթացը, հայկական լրատվամիջոցները հնարավորություն չեն ունեցել անգամ գնալ սահման՝ լուսաբանելու հանրության համար այդ խիստ կարեւոր ու սպասված իրադարձությունը: Տհաճ իրավիճակ էր ստեղծվել նաեւ այն առումով, որ հայկական կողմը գերիների վերադարձի կոնկրետ տեղի եւ ժամի մասին տեղեկանում էր ադրբեջանական լրատվամիջոցներից: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ կառավարություն՝ պարզելու, թե ինչու հայկական ՁԼՄ-ների այցը սահման չէր կազմակերպվել: «Նպատակահարմար է համարվել այդպես կազմակերպել, այս դեպքում կարեւորը գերիների վերադարձն է: Այս դեպքում կարեւոր է համարվել, որպեսզի առաջնահերթ կերպով գերիների վերադարձը կազմակերպվի»,- ասաց Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Խաչատրյանը:

Դատական համակարգում իրարանցում է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատավորների մի խմբի տեղեկություններ են հասել, որ իրավապահները որոշ դատավորների մասով օպերատիվ տվյալների են տիրապետում: Մասնավորապես՝ տվյալներ կան, որ դատավորներից մեկը կաշառք է վերցրել: Ավելին՝ մեզ հայտնի է դարձել, որ Սնանկության դատարանի դատավորներից կոնկրետ դատավորի շուրջ օղակը սեղմվում է: Ի դեպ, դատական համակարգում անուններ են տալիս, որոնք պոտենցիալ մեղադրյալներ են, սակայն «Ժողովուրդ» օրաթերթն այս պահին չի հրապարակում անմեղության կանխավարկածի սկզբունքը պահպանելու համար: Տեսնենք, թե ինչ արդյունք կունենա իրավապահների օպերատիվ տվյալների մշակումը, եւ ինչ է սպասվում Սնանկության դատարանի դատավորներին:



ԶՐՈՒՅՑ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԵՂԵԼ Է ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանն է:

-Տիկին Հարությունյան, թեեւ «Բալասանյան դաշինք»-ի հետ համագործակցության հուշագիրը խզելուց հետո հայտարարել եք, որ որպես ընդդիմություն եք դիրքավորվում, բայց համացանցում, ինչպես նաեւ հանրության շրջանում շատ է քննարկվում այն հարցը, որ պատրաստվում եք Գյումրիում նույն սցենարը կրկնել, ինչ Ալավերդիում, այսինքն՝ պաշտոնանկ անեք համայնքապետին, որը «Բալասանյան դաշինք»-ից է:

-Մենք հայտարարել ենք, որ մեր լիազորություններն իրականացնելու ենք ավագանու 11 մանդատով, այսինքն՝ մենք մեր աշխատանքը պատկերացնում ենք 11 մանդատի լիազորությունների շրջանակում: Կլինեն նախագծեր, որոնք եթե լավը լինեն ու բխեն մեր քաղաքացիների շահերից, բնականաբար, այդ նախագծերի օգտին մենք կողմ կքվեարկենք եւ պատրաստ կլինենք համագործակցության, կլինեն նաեւ նախագծեր, որոնց մեջ խնդրահարույց կետեր կտեսնենք, բնականաբար, այդ նախագծերը մեր կողմից կմերժվեն:

Ինչ վերաբերում է քաղաքապետին անվստահություն հայտնելուն, մենք ունենք ընդամենը 11 մանդատ, եւ այդ մանդատով իմպիչմենտի հարց առաջ քաշել հնարավոր չէ. սա թույլ չի տալիս որեւէ գործընթաց սկսել:

-Վերջերս Գյումրու ավագանու «Զարթոնք» խմբակցության ղեկավար Վարդեւան Հակոբյանը հայտարարեց, որ չի բացառում ՔՊ-ի հետ հնարավոր համագործակցությունը՝ Գյումրու քաղաքապետ Վարդգես Սամսոնյանին պաշտոնանկ անելու համար: Մյուս ուժերի հետ նման հարց քննարկե՞լ եք:

-Մենք որեւէ այլ ուժի հետ քննարկում այդ հարցով չունենք, որեւէ բանակցություն չենք վարել ու չենք վարում:

-Ինչպես ՔՊ-ն իր պաշտոնական հաղորդագրության մեջ է պարզաբանել, «Բալասանյան դաշինք»-ի հետ համագործակցության դադարեցման պատճառը եղել է այն, որ պայմանավորվածությունները չեն պահպանվել, Գյումրիում ստվերային կառավարում է իրականացվել՝ արտաքին ուժերի միջամտությամբ: Ի՞նչ նկատի ունեք՝ «արտաքին ուժեր» ասելով:

-Մենք բազմիցս մեր աշխատանքում առնչվել ենք այդ խնդրին, այն պայմանավորվածությունները, որոնք ձեռք ենք բերել «Բալասանյան դաշինք»-ի հետ, տարօրինակ կերպով չեն իրականացվել: Մենք ունենք համոզմունք, որ եղել է ստվերային կառավարում, այսինքն՝ քաղաքապետարանում եղել է արտաքին ուժերի կողմից միջամտություն, հակառակ դեպքում ես չեմ կարող բացատրել՝ ինչու մեր պայմանավորվածությունները ի կատար չեն ածվել:

-Որո՞նք են այդ արտաքին ուժերը:

-Արտաքին ուժեր՝ բառիս ամենալայն իմաստով, այսինքն՝ ուժեր, որոնք քաղաքապետարանում որեւէ լիազորություն չեն ունեցել որոշում կայացնելու, բայց կայացրել են համապատասխան որոշումները:

-Եթե նման հայտարարություններ եք անում, որ ստվերային կառավարում է իրականացվել Գյումրիում, եւ արտաքին ուժերի միջամտություն է եղել, ինչու՞ դատախազություն չեք դիմում, որպեսզի իրավական տիրույթում հարցը լուծվի:

-Այն տեքստը, որը մեր քաղաքական ուժը հրապարակել է, բաց է, հանրային է. եթե իրավապահ մարմինները կգտնեն, որ մեր հայտարարության մեջ կան տարրեր, որոնք անհրաժեշտ են ուսումնասիրության, ապա այդ գործը կնախաձեռնեն: Մենք այս մասով բաց ենք, թափանցիկ ենք եւ պատրաստ ենք համագործակցության: Հավելեմ նաեւ, որ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի հիմնադիր Լեւոն Բարսեղյանը հաղորդում է տվել դատախազություն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԳԵՐԻՆԵՐԸ

Դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչապետի աշխատակազմն ու Ադրբեջանի նախագահի վարչակազմը համատեղ հայտարարություն տարածեցին, որում ասվում էր՝ Ադրբեջանի Հանրապետությունն ազատ է արձակում 32 հայ զինծառայողի, Հայաստանն էլ իր հերթին ազատ է արձակում դատապարտված 2 ադրբեջանցի զինծառայողի:

Զինծառայողների փոխանակումը տեղի ունեցավ երեկ՝ դեկտեմբերի 13-ին, Ղազախ-Իջեւան սահմանին:

Հայաստան վերադարձած 32 գերիներից 26-ը Շիրակի մարզից են, որոնք գերեվարվել էին 2020թ.-ին Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղի մարտական դիրքերում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանի հետ:

-Պարոն Մուրադյան, ի՞նչ վիճակում են երեկ վերադարձած շիրակցի գերիները, առողջական ու հոգեբանական ի՞նչ խնդիրներ ունեն նրանք:

-Ես զրուցել եմ տղաների հետ, բուժնություն են անցել «Մուրացան» բժշկական կենտրոնում, ընդհանուր առմամբ, թե՛ տրամադրությունն էր նրանց լավ, թե՛ առողջական վիճակը: Եթե էական խնդիրներ լինեին, բնականաբար, տուն չէին գնա. երեկ՝ բուժզննում անցնելուց հետո, բոլորս միասին վերադարձել ենք Շիրակի մարզ:

-Իսկ տղաները պատմե՞լ են՝ ինչպես են նրանց վերաբերվել Բաքվում, մանրամասներ Ձեզ պատմե՞լ են:

-Այնպիսի տրամադրություն էր, որ հայրենիքում էին, ոգեւորված էին, ուրախ էին, իսկ թե ինչպես են այնտեղ իրենց վերաբերվել, նման հարցադրումներ իմ կողմից չեն եղել. իրենք ուրախ էին, ոգեւորված:

-Պարոն Մուրադյան, տեղեկություն ունե՞ք, Խծաբերդից գերեվարված շիրակցի բոլոր գերեվարվածնե՞րն են վերադարձել:

-44-օրյա պատերազմի գերիներից Խծաբերդում գերեվարվածներից մնացել էին 26 հոգի, նրանք բոլորն էլ երեկ վերադարձան:

Հիշեցնենք, որ երեկ լրագրողները կառավարության հերթական նիստից հետո՝ կառավարության անդամների ճեպազրույցների ժամանակ, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանից մեկնաբանություն խնդրեցին վերադարձած ռազմագերիների առողջականի վերաբերյալ:

«Իրականացվել է նախնական բուժհետազոտություն: Այս պահին բուժկենտրոններ տեղափոխվածներ չկան, դրա կարիքը չի եղել: Հետազոտություններն իրականացվել են «Մուրացան» հոսպիտալում»,- նշեց Անահիտ Ավանեսյանը:

Զրուցեց Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱԿՆՀԱՅՏ ԱԳՐԵՍԻՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը վերջերս հրապարակեց այն պաշտոնյաների ցանկը, որոնք ապօրինաբար առկայծող փարոսիկներ են օգտագործում իրենց սպասարկող մեքենաների վրա: Ցանկում նշված էին ՀՀ դատախազ Աննա Վարդապետյանը, Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը, ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, ինպես նաեւ ԱՄՆ, ՌԴ դեսպաններին սպասարկող մեքենաները: «Բոլոր պաշտոնյաների մեքենաները, որոնք կարմիր-կապույտ առկայծող փարոսիկներ են կրում մեքենաների վրա, երթեւեկության մեջ առավելություն է տալիս երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ... Ես հիմա հրապարակավ ասում եմ՝ եթե այս հարցը մեկ շաբաթից չլուծվի, իմ մեքենայի վրա էլ եմ «միգալկա» դնելու, ու թող փորձեն ինձ կանգնացնեն»,-ասել էր Թորոսյանը: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել ՀՀ քննչական կոմիտե՝ պարզելու, թե Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը ինչպես է վերաբերվում պատգամավորի հնչեցրած հայտարարություններին եւ ի՞նչ քայլեր է նախատեսում ձեռնարկել այս ուղղությամբ: Ի պատասխան՝ մեզ տեղեկացրին. «ՀՀ քննչական կոմիտեի նախագահի անվտանգությունը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներով ուղեկցումն ապահովվում է ՀՀ պետական պահպանության ծառայությունը: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի ուղեկցումը՝ նաեւ ավտոմեքենաների՝ փարոսիկներով կահավորվածության առումով, իրականացվում է՝ սահմանված կարգին համապատասխան»: Հավելենք, որ Արսեն Թորոսյանը իրավապահ մարմինների ղեկավարների նկատմամբ ունի ակնհայտ ագրեսիվ վերաբերմունք, քանի որ քննություն է գնում իր կողմից ենթադրյալ չարաշահումների գործով:

ՊՈՒՏԻՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

«Մենք չէինք, որ լքեցինք Ղարաբաղը. Հայաստանն էր, որ ճանաչեց, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է»,- հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը՝ պատասխանելով «Միր» հեռուստաալիքի թղթակցի հարցմանը՝ ԱՊՀ ապագայի վերաբերյալ՝հաշվի առնելով Հայաստանի ու Մոլդովայի դիրքորոշումները: Ինչպե՞ս է նախագահը ընդհանրապես գնահատում հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն միավորումները:

«Հայաստանում Ղարաբաղի հետ կապված պարզ գործընթացներ չեն ընթանում: Սա բոլորս հասկանում ենք: Մենք չէինք, որ լքեցինք Ղարաբաղը. Հայաստանն էր, որ ճանաչեց, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է: Նրանք դա իրականում արել են սեփական նախաձեռնությամբ, իսկ մեզ առանձնապես չեն տեղեկացրել, որ պատրաստվում են նման որոշման: Սա պարզապես փաստի հաստատում է, քանի որ դրանում կան եւ դրական, եւ բացասական կողմեր: Դե, դա տեղի ունեցավ, եւ ներքաղաքական գործընթացները բարդ են»,- ասել է Պուտինը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՄԵԿՆԵԼ ԽՈՐՎԱԹԻԱ

Նոյեմբերի 21-ին Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբի «Մաքսիմիր» մարզադաշտում կայացավ ՈՒԵՖԱ Եվրոպայի 2024 թվականի առաջնության որակավորման խմբային փուլի D խմբի վերջին մրցափուլի Խորվաթիա-Հայաստան հանդիպումը: Հանդիպման 43-րդ րոպեին Խորվաթիայի հավաքականի խաղացող Անտե Բուրիմիրը բացեց խաղի հաշիվը: Հավելենք, որ Հայաստանի ազգային հավաքականը Զագրեբ էր մեկնել նոյեմբերի 20-ին: Հավաքականի մարզիչ Ալեքսանդր Պետրարկովն ավելի ուշ հաստատել էր, որ հավաքականի վերջնական հայտացուցակում ընդգրկված են 23 ֆուտբոլիստներ՝ Օգնեն Չանչարեւիչ, Ստանիսլավ Բուշնեւ, Արսեն Բեգլարյան, Անդրե Չալոշը, Ալբերտ Խաչումյան, Տարոն Ոսկանյան, Ստյոպա Մկրտչյան, Ժիրայր Ճաղոյան, Էդգար Սեւիկյան, Էդուարդ Սպերցյան, Արթուր Սերոբյան, Լուկաս Սելարայան, Կամո Հովհաննիսյան, Արթուր Միրանյան, Էրիկ Փիլոյան, Ժիրայր Մարգարյան, Հովհաննես Հարությունյան, Վբեյմար Անգուլո, Հրանտ-Լեոն Ռանոս, Արտակ Դաշյան, Նաիր Տիկնիզյան, Գեորգի Հարությունյան, Վահան Բիչախչյան: Վարազդատ Հարոյանը եւ Ուգոչուկվու Իվուն չմեկնեցին Խորվաթիա: Մեր ընտրանու ավագը բաց թողեց հանդիպումը ընտրական փուլում ստացած 5-րդ դեղին քարտի, իսկ Իվուն՝ Ուելսի դեմ խաղում ստացած վնասվածքի պատճառով: Ըստ տրամաբանության՝ Զագրեբ պետք է մեկնեին հայտավորված մարզիկները, մարզիչը եւ սահմանափակ թվով անդամներ, սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Խորվաթիա են մեկնել հնարավոր ու անհնարին, տրամաբանությունից հեռու ու մոտ մի շարք անձինք, որոնք փաստացի ոչինչ չեն ունեցել անելու. իրենց գործառույթը իրականացնելու կարիք եղել է Հայաստանում եւ ոչ թե Խորվաթիայում: Ըստ տեղեկությունների՝ ՀՖՖ-ի հաշվին, Մելիքբեկյանի «դաբրոյով» Զագրեբ է մեկնել նաեւ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանը: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՖՖ՝ պարզելու, թե, Հայաստանի ազգային հավաքականից բացի, ովքեր են մեկնել Խորվաթիա՝ խաղին ընդառաջ: Խնդրել էինք տրամադրել ցանկ: Նաեւ խնդրել էինք տրամադրել տեղեկություն, թե որքան գումար է ծախսվել նրանց թռիչքի, կեցության եւ օրապահիկի համար: Ինչպես միշտ, այս անգամ եւս Մելիքբեկյանի ղեկավարած կառույցը հարցերին պատասխանում է միեւնույն ոճով՝ լռությամբ: Հատուկ ՀՖՖ-ի անձնակազմի եւ Արմեն Մելիքբեկյանի համար հարկ ենք համարում նշել, որ տեղեկատվական հարցումներին պետք է պատասխանել 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ամեն դեպքում, այս ծածկադմփոցից որեւէ տվյալ չհաղորդելով՝ ֆեդերացիան գնդակը գլորեց դեպի Գաբրիելյանի դաշտ: «Ժողովուրդ» օրաթերթը օրեր շարունակ փորձեց կապ հաստատել պատգամավորի հետ՝ պարզելու, թե արդյոք գնացել է նա Զագրեբ, եւ եթե գնացել է, ինչ նպատակով: Սիսակ Գաբրիելյանը եւս մեր զանգերն ու նամակները թողեց անպատասխան. հնարավոր չեղավ պարզել, թե, օրինակ, այդ պատգամավորի եւ մյուս պաշտոնյաների ճամփորդության եւ կեցության ծախսերն ով է հոգացել:

ՀԱՅՏՆԵՑ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ

Ադրբեջանում դեմ են հայ-ադրբեջանական սահմանից զորքերի հեռացմանը:

«Կպատասխանեմ հակիրճ. համաձայն չեմ Հայաստանի ԱԳՆ ղեկավարի կարծիքի հետ»,- երեկ Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի հետ համատեղ ասուլիսում ասաց Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը՝ մեկնաբանելով Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հայտարարությունը՝ սահմանից երկու երկրների զորքերը հետքաշելու մասին:

«Հայ-ադրբեջանական սահմանը սահմանազատված չէ, սա բավականին բարդ խնդիր է: Եթե զորքերը դուրս բերվեն առանց լիակատար համաձայնության գալու, ո՞վ կարող է երաշխավորել, որ կողմերից մեկը կրկին դիրքեր չի զբաղեցնի:

Այսօր ադրբեջանական բանակը պաշտպանում է Ադրբեջանի սահմանները, ինչը տրամաբանական է: Ադրբեջանական բանակը որեւէ մեկի բարի կամքով կամ հրավերով չի եկել այս սահմաններին կանգնել: Ադրբեջանական բանակը 30 տարվա արյունահեղությունից հետո ազատագրել է իր հողերը եւ այսօր կանգնած է սահմաններին: Մեր սկզբունքային մոտեցումն այն է, որ Ադրբեջանի սահմանը կարող են պաշտպանել միայն ադրբեջանցի զինվորները. դա չի կարելի վստահել երրորդ կողմին: Դա Ադրբեջանի ինքնիշխան իրավունքն է:

Մենք խորհուրդ ենք տալիս Հայաստանին ուշադրություն դարձնել մեր կառուցողական առաջարկներին, այս դեպքում հարցերը կարող են դրական զարգանալ»,- ընդգծել է Ջ.Բայրամովը:

Ադրբեջանի ԱԳՆ ղեկավարը Թուրքիային անվանել է «անաչառ կողմ» Բաքվի եւ Երեւանի միջեւ բանակցություններում:

«Թուրքիան նաեւ Հայաստանի հետ հարեւան է: Որպես տարածաշրջանային երկիր՝ Թուրքիան աջակցում է տարածաշրջանում խաղաղության, կայունության եւ զարգացման հաստատմանը: Եթե Հայաստանը շարժվի այս տրամաբանությամբ, ապա նրան ձեռնտու կլինի տեսնել Թուրքիային բանակցությունների սեղանի շուրջ:

Հիմա որոշումը Հայաստանի սեղանին է: Վերջին շրջանում Ադրբեջանն աջակցում է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը»,- ասել է ադրբեջանցի նախարարը:

Հիշեցնենք, որ Թուրքիան ուղղակի ռազմական օգնություն է ցուցաբերում Ադրբեջանին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիայի հարցում:

Հավելենք, որ Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը Բաքվում պաշտոնական այցի ընթացքում կայացած մամուլի ասուլիսում հայտնեց, որ ներկա փուլում Հայաստանն ու Ադրբեջանն առավել քան երբեւէ մոտ են խաղաղության համաձայնագրին:

«Երեք տարի առաջ տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո պատմական հնարավորություն է ստեղծվել տարածաշրջանում խաղաղության հասնելու համար: Մենք կարծում ենք, որ այսօր առավել քան երբեւէ խաղաղության համաձայնագրի հասնելու այս հնարավորությունը դարձել է շատ ավելի իրական, եւ դրանից այլեւս չպետք է խուսափել: Մենք ողջունում ենք դրական առաջընթացը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ մշտական խաղաղության եւ սահմանների հստակեցման վերաբերյալ համաձայնագրի կնքման ուղղությամբ»,- ասել է Ֆիդանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԱՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ⇨

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Ռուբիկ Նավոյանն ազատվել է ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով՝

Ռուբիկ Նավոյանին ազատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալի պաշտոնից»,- ասված է որոշման մեջ:

ԲԿ՝ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Վարդենիսում բժշկական նոր կենտրոն կկառուցվի:

Կառավարության նիստում այս մասին հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանից հետաքրքրվեց, թե կառուցման աշխատանքները ինչ փուլում են: Ավանեսյանը պատասխանեց, որ 2024 թվականին կիրականացվեն նախագծման աշխատանքները, այնուհետեւ՝ շինարարական աշխատանքները:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երեւանում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով դեկտեմբերի 15-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Գայի պողոտա - Հովհաննիսյան փողոց եւ Գայի պողոտա - Քոչարյան փողոց խաչմերուկներում:

Երեւանի քաղաքապետարանից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ Գայի պողոտա - Քոչարյան փողոց խաչմերուկում՝ Գայի պողոտա -Հովհաննիսյան փողոց խաչմերուկից եկող ուղղությամբ, կավելանա եւս մեկ երթեւեկելի գոտի՝ «միայն ձախ»:

Գայի պողոտա - Հովհաննիսյան փողոց խաչմերուկում՝ Գայի պողոտա - Քոչարյան փողոց խաչմերուկից եկող ուղղությամբ, կարգելվի ձախ շրջադարձը դեպի Բաղյան փողոց, երրորդ երթեւեկելի գոտուց կթույլատրվի երթեւեկությունը «միայն ուղիղ»:

Միաժամանակ, Գայի պողոտայի ամբողջ երկայնքով ճանապարհային նշաններն ու գծանշումները կհամապատասխանեցվեն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար նախատեսված գոտու կահավորանքին:

ԹՈՒՐՔԻԱՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի պաշտպանության նախարար Յաշար Գյուլերը Ազգային մեծ ժողովում հայտարարել է, որ կարեւոր հնարավորություն է բացվել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ մշտական խաղաղության հաստատման համար:

«Հայաստանը պետք է գործի՝ դա գիտակցելով: Մենք անկեղծորեն ցանկանում ենք, որ նրանք պատրաստակամություն ցուցաբերեն համագործակցել իրենց հարեւանների, ոչ թե ուրիշների հետ»,- հայտարարել է Թուրքիայի պաշտպանության նախարարը:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՐԴԻՆԵՐՆ ՈՒ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով դատախազը 2023 թվականի դեկտեմբերի 12-ին հաստատել է ՊԵԿ նախկին նախագահ Գ.Խ.-ի որդի Ա.Խ.-ի եւ եղբորորդու՝ «Մուլտի գրուպ կոնցեռնի» գլխավոր տնօրեն Ս.Ա.-ի եւ բանկերից մեկի վարորդ Ա.Պ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

ԱԱԾ քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Գ.Խ.-ն, 2008-2016 թվականներին զբաղեցնելով Մաքսային պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատարի, նույն կոմիտեի նախագահի, Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի եւ ֆինանսների նախարարի պաշտոնները, հանձնարարել է Կոմիտեի, այնուհետեւ՝ Ֆինանսների նախարարության պաշտոնատար անձանց համագործակցել իր որդիներ Ա.Խ.-ի եւ Գ.Խ.-ի, ազգական Ա.Խ.-ի կողմից հիմնադրված ՍՊ ընկերության հետ, վերացնել գնման ընթացակարգում առաջացող խոչընդոտներն ու կիրառել առավել բարենպաստ գնման ընթացակարգեր:

Օգտվելով Գ.Խ.-ի կողմից ապօրինի կերպով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ ՍՊ ընկերությունը 2008-2020 թվականների ընթացքում Կոմիտեի հետ կնքել է 4 մլրդ 426 մլն 435 հազար դրամ արժեքով ապրանքների մատակարարման եւ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Բացի այդ, Գ.Խ.-ն իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող եւ այլ անձանց մասնակցությամբ ապահովել է, որ իր որդիների ու եղբորորդու ընկերության հետ կնքվի 19 ծրագրային մոդուլի ձեռք բերման պայմանագիր իրական արժեքից էապես բարձր՝ 4 մլրդ 283 մլն 580 հազար դրամով (նշված ընկերության հետ պայմանագիր կնքելիս գնում կատարելու վերաբերյալ մրցույթ չի անցկացվել, ընտրվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը, հրավերն ուղարկվել է միայն իր որդիների ու եղբորորդու ընկերությանը):

Թեեւ պայմանագրով նախատեսված աշխատանքները կապալառուի եւ ենթակապալառուի կողմից փաստացի կատարվել են 2 մլրդ 777 մլն 410 դրամով, սակայն այդ աշխատանքների դիմաց պետական միջոցներից ընկերությանը փոխանցվել է 4 մլրդ 283 մլն 580 հազար դրամ, որի արդյունքում յուրացման եղանակով հափշտակվել է 1 մլրդ 506 մլն 169 հազար 583 դրամ:

Վերոնշյալ արարքների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը, դրա օգտագործումից ստացված եկամուտները բանկային փոխանցումների միջոցով ուղղորդվել են Գ.Խ.-ի որդիներ Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի եւ եղբորորդի Ա.Խ.-ի հետ փոխկապակցված կազմակերպությունների բանկային հաշիվներին, միախառնվել են այլ միջոցների հետ եւ տնօրինվել նրանց կողմից:Վերոնշյալ եղանակով 2011-2018 թվականների ընթացքում նրանց մասնակցությամբ գործող մեկ այլ ՍՊ ընկերությանը փոխանցվել է 39 մլրդ 723 մլն 323 հազար դրամին համարժեք գումար, որից որպես փոխառություն՝ 32 մլրդ 332 մլն 943 հազար դրամին համարժեք գումար: Ստացված, ինչպես նաեւ կանխիկ մուտքագրված եւ հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող ՍՊ ընկերության ֆինանսական միջոցների հետ միախառնված գումարի մի մասը՝ 8 մլն 589 հազար 900 ԱՄՆ դոլարը, Գ.Խ.-ի որդիների եւ եղբորորդու պահանջով, փոխառության վերադարձի հիմնավորմամբ, ընկերության տնօրենի անվամբ կանխիկացվել, ապա մուտքագրվել է Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված ընկերության հաշվեհամարին:

Բացի այդ, Գ.Խ.-ի որդիները, տեղյակ լինելով «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ս.Ա.-ի կողմից ՀՀ ՊԵԿ նախագահի պաշտոնը զբաղեցրած՝ իրենց հորն առանձնապես խոշոր չափերով՝ 22 մլն 185 հազար ԱՄՆ դոլարի եւ 206 հազար 500 եվրոյի կաշառք տալու համաձայնության մասին, հանդիպել են Ս.Ա.-ին եւ վերջինիս հետ քննարկել հանցագործության առարկան փոխանցելու տարբերակները:

Բացի այդ, Գ.Խ.-ի որդիները 2011-2016 թվականների ընթացքում լվացել են հանցավոր ճանապարհով ստացված 1 մլրդ 555 մլն դրամ, 97 մլն 203 հազար ԱՄՆ դոլար, 2 մլն 65 հազար եվրո:

Մասնավորապես՝ Գ.Խ.-ի որդիներ Ա.Խ.-ն, Գ.Խ.-ն եւ եղբորորդի Ա.Խ.-ն մասնակցել ու ղեկավարել են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող շուրջ 48 ընկերություն, եւ օգտվելով Գ.Խ.-ի զբաղեցրած պաշտոններով պայմանավորված հովանավորչությունից՝2011-2016 թվականների ընթացքում թաքցրել են վերոնշյալ կազմակերպությունների գործունեության իրական ծավալները:

Արդյունքում առաջացել են չհայտարարագրված եւ հարկային մարմնի հսկողությունից դուրս մնացած եկամուտներ՝ 1 մլրդ 555 մլն դրամ, 97 մլն 203 հազար ԱՄՆ դոլար, 2 մլն 65 հազար եվրո: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները 2011-2016 թվականների ընթացքում տրամադրել են բանկերից մեկում որպես վարորդ աշխատող Ա.Պ.-ին եւ հանձնարարել վարձատրության դիմաց կանխիկ մուտքագրել իրենց կողմից տրված բանկային հաշվեհամարներին:

Ա.Պ.-ն իրեն փոխանցված կանխիկ գումարները մուտքագրել, ապա բանկային գործարքով փոխանցել է փաստացի Գ.Խ.-ի որդիների եւ եղբորորդու հետ փոխկապակցված՝ արտերկրում, այդ թվում՝ օֆշորային գոտիներում գրանցված, ՀՀ-ում որեւէ տնտեսական գործունեություն չիրականացնող հինգ ընկերությունների հաշվեհամարներին, միախառնել այլ միջոցների հետ: Գումարները փոխանցումների եւ կանխիկացումների միջոցով տնօրինվել են Գ.Խ.-ի որդիների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից:

Բացի այդ, Գ.Խ.-ի եղբորորդի Ա.Խ.-ն, հանդիսանալով «Մեգա ֆուդ» ՍՊ ընկերության միակ հիմնադիրը եւ տնօրենը, 2011, 2012, 2014, 2015 եւ 2016 թվականներին հարկային մարմիններ ներկայացրած փաստաթղթերում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ եւ չի վճարել 369 մլն 439 հազար դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Բացի այդ, Ա.Խ.-ն, հանդիսանալով Գ.Խ.-ի որդիների կողմից հիմնադրված «Ապեյրոն» ՍՊ ընկերության տնօրենը, 2011-2016 թվականների ընթացքում հարկային մարմիններ ներկայացված փաստաթղթերում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ եւ չի վճարել 424 մլն 555 հազար դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Գ.Խ.-ի որդի Ա.Խ.-ի նկատմամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀԱՎԱՔԻՑ ԽՈՒՍԱՓԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադառնում է վարժական հավաքներից խուսափողների նկատմամբ հարուցված քրեական գործերին: Այսպիսով, պարզեցինք, որ 2023 թվականին վարժական հավաքներից խուսափելու համար շուրջ 40 անձի վերաբերյալ քրեական գործեր են ուղարկվել դատարան, եւ նրանց մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով: Ըստ Քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի առաջին մասի՝ անցկացվող վարժական հավաքից խուսափելը՝այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՐԱԵՐԹ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 14-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 07:40-ի սահմաններում Արագածոտնի մարզի բնակիչ 65-ամյա Սարգիս Ե.-ն իր վարած «ՎԱԶ 2102» մակնիշի ավտոմեքենայով Գրիգոր Հասրաթյան փողոցի թիվ 8/2 հասցեի դիմաց՝ վերգետնյա անցման մոտ, վրաերթի է ենթարկել փողոցը չթույլատրված հատվածով անցնող հետիոտնին՝ Երեւանի բնակիչ 73-ամյա Լեւոն Կ.-ին: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վերջինս մարմնական վնասվածքներով օպերատիվորեն դեպքի վայր ժամանած 1-03 շտապօգնության բժիշկների կողմից տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Մինչ դեպքի վայրում աշխատում էին պարեկները, հիվանդանոցից ահազանգ է ստացվել ոստիկանության Մաշտոցի բաժին, որ վրաերթի ենթարկվածը, գիտակցության չգալով, մահացել է: Վարորդը տեղում ենթարկվել է սթափության փորձաքննության. եղել է սթափ: Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվել է ՊԾ Երեւան քաղաքի գնդի պահպանվող հատուկ տարածք: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԿԱՐԵՎՈՐ

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՅՈՒՅ

Նոյեմբերի 29-ի ժամը 20:00-ին ոստիկանության Կենտրոնական բաժին էր ներկայացել Արգենտինայի Հանրապետության 34-ամյա մի քաղաքացի եւ հայտնել, որ Սայաթ-Նովայի պողոտայի եւ Աբովյան փողոցի խաչմերուկում գողացել են իր պայուսակը, որի մեջ անձնագիր, փող, նույնականացման քարտ եւ 2 բջջային հեռախոսներ էին:

Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է նշված արարքը կատարողի ինքնությունը:

Հետագա ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 7-ին քրեական հետախույզները Վարդանանց փողոցում հայտնաբերել, գողություն կատարելու կասկածանքով ձերբակալել եւ ոստիկանության Կենտրոնական բաժին են տարել երեւանցի 40-ամյա տղամարդուն, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացրել են նախաքննական մարմին, որտեղ նա խոստովանել է արարքը:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

ԿՐԱԿԵԼ Է ՁԻԵՐԻՆ

Դեկտեմբերի 8-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: ՀՀ ՆԳՆ նախարարության ոստիկանության Արտաշատի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Քաղցրաշեն գյուղի բնակիչ 51-ամյա Համլետ Հ.-ն որսորդական հրացանով կրակել եւ վնասել է համագյուղացի 32-ամյա Ռուբիկ Ա.-ին պատկանող ձիուն եւ նրա քուռակին. հաղորդում է Shamshyan.com-ը:

Գյուղ են մեկնել ոստիկանության Արտաշատի բաժնի օպերատիվ խումը, որտեղ պարզվել է, որ ստացված տեղեկությունները հավաստի են, իսկ կրակելուց հետո Ռուբիկ Ա.-ն ստիպված է եղել մորթել ձիուն եւ քուռակին:

Տեղում պարզվել է, որ կրակելու պատճառը եղել է այն, որ ձիերը մտել են Համլետ Հ.-ի հողամաս, ինչից վերջինս նեղսրտել է ու «մուռը հանել է»՝ ձիերի վրա կրակելով:

Ոստիկանները նրա հետ կատարել են բացատրական աշխատանք. վերջինս ոստիկաններին է ներկայացրել 12 մմ տրամաչափի «ԻԺ-27 ԵՄ» տիպի երկփողանի որսորդական ողորկափող հրացանը:

Դեպքի փաստով ոստիկանության Արտաշատի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն:

Տուժածը ոստիկաններին հայտնել է, որ իրեն պատճառվել է մոտ 700 հազար դրամի վնաս:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում դեկտեմբերի 13-ից 14-ը բացահայտվել է հանցագործության 95 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՌԱՑՐԵԼ ԵՆ ԴՊՐՈՑԻՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը դեկտեմբերի 4-ին որոշել է Նարինե Բուդուրյանին ազատել Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2018թ. դեկտեմբերի 3-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: 2023թ. հոկտեմբերին այդ դպրոցի 8-րդ դասարանում անգլերեն լեզվի գրավոր աշխատանքի ժամանակ ուսուցչուհի Ասյա Ավագյանը լավ սովորող աշակերտուհուն կասկածել է գրավոր առաջադրանքի պատասխանները արտագրելու մեջ, գրավոր աշխատանքը խլել է աղջկանից, վիրավորական արտահայտություններ թույլ տվել նրա հասցեին: Աշակերտուհին թողել է դասարանը, արցունքն աչքերին՝ գնացել է իրենց տուն: Դպրոցի մանկավարժական խորհրդում Ասյա Ավագյանը հայտարարել է, թե այդ աշակերտուհին եւ իր ծնողները պետք է իրենից ծնաչոք ներողություն խնդրեն:

Մարզպետ Ղալումյանը, պատասխանելով «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը, հայտնել է, որ մարզպետի աշխատակազմը դեպքի առթիվ բանավոր նկատողություն է տվել Ա. Ավագյանին եւ տնօրեն Ն. Բուդուրյանին:

Վ. Կարմիրաղբյուրում անչափահասի մասնակցությամբ եւս մի արտակարգ իրավիճակ է եղել: 14-ամյա աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալու առթիվ հարուցված քրեական գործով նույն գյուղի բնակիչ, 58-ամյա եւ 57-ամյա տղամարդկանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը: 14-ամյա աղջիկը կատարվածից հետո դպրոցը թողել է, տեղափոխվել, այժմ բնակվում է Բերդ քաղաքում ապրող իր հարազատի հետ: Մարզպետ Հ. Ղալումյանը դեպքի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել է. «Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղի 14-ամյա աղջկա հետ կատարված դեպքի կապակցությամբ տեղի է ունեցել քննարկում մարզպետի աշխատակազմի աշխատակիցների, համայնքի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի, ՄԱԾ Բերդի տարածքային կենտրոնի, ոստիկանության համապատասխան աշխատակիցների եւ համայնքում գործող երեխայի հարցերով զբաղվող ՀԿ-ների ու միջազգային գործընկեր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են դեպքի առկա հանգամանքները եւ երեխայի հետ իրականացվելիք առաջնային քայլերը: Համայնքի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կողմից աշխատանքներ են իրականացվում երեխայի իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Համայնքի համապատասխան աշխատակիցների կողմից իրականացվել են անհրաժեշտ սոցիալ- հոգեբանական, վերականգնողական, վարքային խնդիրների լուծմանն ուղղված եւ այլ ծառայություններ: Դիտարկվել է նաեւ անհրաժեշտության դեպքում, համագործակցելով իրավապահ մարմինների հետ, երեխայի ժամանակավոր տեղավորման հարցը կարճաժամկետ խնամքի որեւէ հաստատությունում: Գործը գտնվում է դեռեւս նախաքննության փուլում, ուստի երեխայի հետագա խնամքի եւ դաստիարակության վերաբերյալ վերջնական որոշում հնարավոր է կայացնել նախաքննության ավարտից հետո»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱԶԱՏՎԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Դեկտեմբերի 13-ին Երեւանի քաղաքապետարանի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնեց ավտոբուսի 31 վարորդների՝ աշխատանքից ազատման մասին: «Երեւանի քաղաքապետարանն իր ենթակա կազմակերպություններում աշխատանքային կարգապահության եւ մասնագիտական պարտականությունների թերացումների, ինչպես նաեւ այլ արատավոր երեւույթների դեմ հետեւողական, խիստ միջոցներ է կիրառում եւ շարունակելու է կիրառել:

Մանկապարտեզների տնօրենների ազատման՝ նախորդ գրառմանս համատեքստում ուզում եմ տեղեկացնել, որ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ում նույնպես աշխատակիցներ (վարորդներ) են ազատվել աշխատանքից:

Մասնավորապես՝ ս.թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում քաղաքացիների հետ ոչ պատշաճ վերաբերմունքի, երթեւեկության ընթացքում թույլ տված պարբերական խախտումների, ինչպես նաեւ ծառայողական այլ խնդիրների պատճառով 31 վարորդ ազատվել է աշխատանքից»,- գրել էր Կոստանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պատճառները տարբեր են եղել տարբեր վարորդների դեպքում: Գաղտնիք չէ, որ Zhongtong եւ MAN ավտոբուսների մեջ կան տեսանկարահանման սարքեր, որոնք տեղակայված են ավտոբուսի տարբեր մասերում, այդ թվում՝ վարորդի նստատեղին հարող տարածքում, որը ֆիքսում է նաեւ հենց այդ տարածքում տեղի ունեցող իրադարձությունները:

Օրվա կամ շաբաթվա վերջին տեղի է ունենում մոնիթորինգ, որի ժամանակ ուսումնասիրվում է տեսախցիկների բովանդակությունը:

Տեղի ունեցած մոնիթորինգի արդյունքում հայտնի են դարձել մի շարք խախտումներ, որոնք հանդիսացել են պատճառ վարորդների աշխատանքից ազատման:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դեպքերից մեկը կապված է եղել վարորդի՝ ուղեւորի հետ ոչ պատշաճ խոսելու, անպարկեշտ արտահայտություններ օգտագործելու հետ:

Մյուս դեպքում վարորդը, գումարի համար նախատեսված արկղիկից զատ, տրամադրվող ուղեվճարը օրվա վերջին չի ներկայացրել որպես մուծում, այլ կերպ ասված՝ իրեն է պահել:

Մեկ այլ դեպքում աշխատանքից ազատման պատճառ է դարձել ղեկին ծխելը:

Տրանսպորտային միջոցն անկանոն վարելը եւս դարձել է վարորդների՝ աշխատանքից ազատման պատճառ:

Այս պահին վարորդների պակաս չկա, ավտոբուսները շահագործվում են, ինչպես հարկն է:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԲՈՂՈՔ

ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐ

«Ես աջ ղեկով մեքենա եմ ներմուծել, հիմա ասում են, որ դրա ներմուծումը 2018 թվականից արգելվել է: Եթե չէր կարելի, թող թույլ չտային ներմուծել»,- դեկտեմբերի 14-ին՝ կառավարության դիմաց վրացական համարանիշներով ավտոմեքենաների վարորդների բողոքի ակցիայի ժամանակ, լրագրողների հետ զրույցում ասաց ակցիայի մասնակիցներից մեկը:

«Մենք իրենց սիրուն աչքերի համար չէ, որ վրացական համարանիշերով ենք բերել: Ինձ համար ավելի հաճելի է, որ հայկական համարներով լինի, ես իմ հայկական գույքի վճարները անեմ: Հիմա իմ ընտանիքը պահելու համար ես դուրս եմ գալիս «Յանդեքս» քշելու: Գնացել, հասել եմ Գյումրի, որ մաքսազերծեմ, ինձ ասում են՝ քոնը աջ ղեկ է, չես կարող: Բա ինչո՞ւ եք թողել, որ բերենք: Ինձ ասում են՝ Հայաստանում «ռուլդ» փոխի՛ր, բե՛ր: Իմ մեքենան էնպիսի մեքենա է, որ չեմ կարող փոխել: Ես որ փոխեմ, իմ ընտանիքի հետ մի բան պատահի, կառավարությունը պատասխան է տալո՞ւ դրա համար»,-նշեց վարորդը:

Հիշեցնենք, որ նրանք իրենց բողոքի ձայնն են բարձրացնում ընդունված նոր օրենքի դեմ, ըստ որի՝ մինչեւ հունվարի 1-ը պետք է իրենց ավտոմեքենաները կամ մաքսազերծեն, կամ Հայաստանից դուրս հանեն:

Նրանք պահանջում են, որ նախ վերանայեն մաքսազերծման տոկոսները եւ 30 տոկոսից դարձնեն 10 տոկոս, երկրորդ՝ աջ ղեկով մեքենաների մասով զիջումներ անեն, որպեսզի կարողանան այդպես մաքսազերծել, քանի որ կան աջ ղեկով մեքենաներ, որոնց ղեկը չի կարող փոխվել աջից ձախ, երրորդ՝ երկարացնեն ժամանակահատվածը գոնե 6 ամիս ժամկետով: Նշենք, որ կառավարության նախորդ նիստում որոշում ընդունվեց, որ վրացական համարանիշներով մեքենաները պետք է մաքսազերծվեն, եւ դրա համար պետությունը որոշակի չափով սուբսիդավորում է: Մասնավորապես՝ մինչեւ 5 տարի տարիք ունեցող մեքենաների համար պետությունը սուբսիդավորում է մաքսատուրքի 30 տոկոսը, իսկ 5 տարի եւ ավելի տարիք ունեցող մեքենաների համար՝ 70 տոկոսը: Մեքենաների սեփականատերերը կվճարեն մաքսատուրքի 30 տոկոսը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 25 ՃՏՊ. 34 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍՏԱՏԵՑ

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄՆ ՈՒ ՆԻՍՏԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարությունը երեկ հաստատեց Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների նիստերի եւ համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը: Նախագիծը ներկայացրեց արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյանը:

Նախարարի տեղակալի խոսքով՝ նախագծի ընդունման հիմքում ընկած է հանձնաժողովների միջեւ սույն թվականի նոյեմբերի 30-ին ձեռք բերված եւ համաձայնեցված աշխատակարգի տեքստը, որի համաձայն՝ աշխատակարգը պետք է հաստատվի երկու երկրների կառավարությունների կողմից:

«Աշխատակարգով սահմանվում են երկու պետությունների ստեղծած սահմանազատման հանձնաժողովների հարաբերություններն ու նիստերի անցկացման ու համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման ընթացակարգերը: Մասնավորապես՝ սահմանվում է, որ նիստերի անցկացման ամսաթիվը, ժամը եւ վայրը որոշվում են հանձնաժողովների նախագահների միջեւ համաձայնությամբ: Նիստերը, որպես կանոն, անցկացվում են հաջորդաբար Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքում, կամ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին կամ երրորդ երկրների տարածքում, ինչպես նաեւ տեսակոնֆերանսի ձեւաչափով:

Այն դեպքում, երբ նիստերն անցկացվում են հանձնաժողովներով ներկայացված պետություններից մեկի տարածքում, ընդունող կողմը ստեղծում է դրանց անցկացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, այդ թվում՝ ապահովում եւ երաշխավորում է բոլոր մասնակիցների անվտանգությունը: Աշխատակարգը սահմանում է նաեւ այլ անհրաժեշտ կարգավորումներ»,-նշեց Մկրտչյանը:

Հաելենք, որ նախարարի տեղակալն ընդգծեց՝ նախագծի ընդունումը կարեւոր քայլ կլինի հանձնաժողովների աշխատանքի կազմակերպման իրավական հիմքերի ամրագրման գործում, որի վրա հենվելով՝ հանձնաժողովները կկազմակերպեն իրենց հետագա գործունեությունը:

«Աշխատակարգի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանազատման հանձնաժողովների անդամներին հնարավորություն է ընձեռնվում նիստերի անցկացման եւ համատեղ աշխատանքների իրականացման միջոցով ստեղծել հիմքեր սահմանազատման եւ սահմանագծման գործընթացների, դրանց իրավական եւ տեխնիկական ասպեկտների մշակման համար՝ հետագայում երկու պետությունների միջեւ պետական սահմանի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ մշակելու եւ ստորագրելու նպատակով»,- եզրափակեց Մկրտչյանը:

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԵՎՏՈՒՐ ԵԱՏՄ-Ի ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարությունը դեկտեմբերի 14-ի նիստում հավանություն տվեց ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի մասին համաձայնագրի ստորագրմանը:

Համաձայնագրի հիմնական խնդիրներն են՝

-Ազատ առեւտրի մասին համաձայնագրի շրջանակներում Ժամանակավոր համաձայնագրի կարգավորիչ մասի օգտագործումը որպես բանակցությունների հիմք՝ կարգավորիչ միջավայրը էականորեն բարելավելու համար:

-Իրանական շուկա ապրանքների առավելագույն հնարավոր տեսականու համար առանց մաքսատուրքի մուտքի ապահովում՝ միաժամանակ ապահովելով Ժամանակավոր համաձայնագրում պարունակվող մուտքի պայմանների չվատթարացումը ներմուծման մաքսատուրքերի վերացման վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռք բերման անհնարինության դեպքում:

Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական եւ հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առեւտրի դյուրացումն ու խթանումը, ներքին շուկայի պաշտպանությունը, մաքսային կարգավորումը, մրցակցությունը, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումները, առեւտրում տեխնիկական խոչընդոտները, ծագման կանոնների որոշումը, վեճերի լուծումը, պետական գնումները եւ այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագիրը նախատեսում է ապրանքների արտահանման եւ ներմուծման գործընթացների ժամանակ կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն, ինչպես նաեւ առեւտրում պաշտպանիչ միջոցների կիրառման ժամանակ ԱՀԿ նորմերի ապահովում:

Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում նաեւ կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ:

Գյուղատնտեսական ապրանքների մասով հայկական կողմից ներկայացված առաջարկներում հիմնականում ներառված են այն ապրանքները, որոնք հանդիսանում են ՀՀ արտահանման առաջնային հետաքրքրություն ունեցող ապրանքներ, եւ որոնք ունեն նաեւ մեծ տեսակարար կշիռ ՀՀ-ից Իրան արտահանման ծավալներում, մասնավորապես՝ հանքային եւ գազավորված ջրեր, ոչ ոգելից խմիչքներ, շոկոլադ, հրուշակեղեն, ծխախոտ, ոչխարի միս, որոնց նկատմամբ կիրառվելու է Իրան ներմուծման զրոյական մաքսատուրքեր:

Արդյունաբերական ապրանքների մասով հայկական կողմից ներկայացված առաջարկներում հիմնականում ներառված են այն ապրանքները, որոնք հանդիսանում են Հայաստանի արտահանման առաջնային հետաքրքրություն ունեցող ապրանքներ, եւ որոնք ունեն նաեւ մեծ տեսակարար կշիռ Հայաստանից Իրան արտահանման ծավալներում, մասնավորապես՝ հանքային հումք (պղնձի եւ ցինկի հանքաքար, մոլիբդենի հանքաքար), արծաթե իրեր, պղնձի անոդներ, գոլորշու գեներատորներ, էլեկտրոնային ծխախոտ, թերմոստատներ եւ այլն: Կազատականացվի մուտքը իրանական շուկա նաեւ էլեկտրաէներգիայի, օգտագործված մարտկոցների համար, կնվազեցվեն Իրան ներմուծման մաքսատուրքերը ոսկերչական իրերի եւ դեղամիջոցների համար:

ՀՀ տնտեսության համար առավել զգայուն որոշ գյուղապրանքների մասով առաջարկվել է պահպանել եւ կիրառել ԵԱՏՄ տարածք ներմուծման սեզոնային սակագնային քվոտավորումպղպեղ, սմբուկ, ձմերուկ եւ սեխ, ինչպես նաեւ սակագնային քվոտավորում՝ արդյունաբերության ոլորտում պլաստմասից արտադրանքի մասով:

Հավելենք, որ համաձայնագրի շրջանակներում իրանական կողմն առաջին անգամ իր միջազգային առեւտրային համաձայնագրերի պրակտիկայում ամրագրում է ներմուծման մաքսատուրքերի զրոյականացման պարտավորություններ:

Համաձայնագրի համաձայն՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մատակարարումը Իրան ապահովվելու է առանց անցումային ժամանակաշրջանների:

Համաձայնագրի կնքմամբ կանխատեսվում է էապես բարձրացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մրցունակությունն իրանական շուկայում, դրա հաշվին ավելացնել ապրանքների արտահանումը Իրան, ակտիվացնել կոոպերացիոն եւ ներդրումային համագործակցությունը:

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՐԾԱՐԱՆԸ ԿՏԵՂԱՓՈԽՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երասխի մեսալուրգիական գործարանը, որը պարբերաբար ադրբեջանական կողմի կրակի տակ էր, կտեղափոխվի ու կկառուցվի Արարատի մարզի Արարատ գյուղում:

Կառավարության նիստում հաստատված որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայումս տարածաշրջանում առկա է ամրանների մեծ պահանջարկ, եւ, ըստ հաշվարկների, այն կպահպանվի եւս 10-15 տարի, որը պայմանավորված է թե՛ Հայաստանում շինարարության մեծ ծավալներով, թե՛ ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով մատակարարման ծավալների կտրուկ անկմամբ:

Գործարանի տեղակայման համար կատարել են ուսումնասիրություններ եւ ընտրել Արարատի մարզի Երասխ համայնքին մերձակա արտադրական նշանակության տարածքներից մեկը:

Արտադրական հզորությունների ամբողջական գործարկման արդյունքում կստեղծվի մինչեւ 500 աշխատատեղ (առաջին փուլով՝ մոտ 240): Գործարանը կունենա 200-250մլն ԱՄՆ դոլարի տարեկան շրջանառություն:

Առաջին փուլով նախատեսվում է կառուցել սեւ մետաղի ջարդոնի վերամշակման գործարան՝ տարեկան 100-120 հազար տոննա արտադրողականությամբ, երկրորդ փուլով արտադրական ծավալները կկրկնապատկվեն, եւ կկառուցվի նաեւ այլ մետաղական կոնստրուկցիաների եւ արտադրատեսակների գործարան (խողովակներ, տարբեր հատվածքի պրոֆիլներ, կոնտեյներներ եւ այլն):

Հավելենք, որ սկզբնական անհրաժեշտ ներդրումը կազմում է մոտ 29,9 միլիոն ԱՄՆ դոլար, որը կստացվի կանոնադրական կապիտալում ներդրման եւ ֆինանսական հաստատություններից ստացված փոխառության միջոցով:

«ՀՀ կառավարությունից ակնկալում է գործուն եւ արագ արձագանք գործարանի կառուցման վայրի տեղափոխման, արդեն իսկ կատարված ներդրումների փոխհատուցման, բանկային ֆինանսավորման աջակցության եւ հնարավոր տեղափոխման արդյունքում առաջացող վարչարարության հարցերում: Ըստ այդմ՝ առանձնացնում ենք հետեւյալ խնդիրը՝ 8.91000 հեկտար արտադրական հողատարածքի տրամադրում Արարատ խոշորացված համայքում»,- ասվում է հիմնավորման մեջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱԼԼԱ ԼԵՎՈՆՅԱՆԸ՝ ԱՄԱՆՈՐԻ ՄԱՍԻՆ

2023 թվականը մոտենում է ավարտին: Մեւ ջրային նապաստակն իր տեղն է զիջում փայտե կանաչ վիշապին:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է տարվա ամփոփման շարքը: Այս անգամ զրուցել ենք երգչուհի Ալլա Լեւոնյանի հետ:

-Ալլա՛ ջան, ամփոփելով անցնող տարին՝ ո՞րն է եղել այն ամենամեծ խնդիրը, որ լուծել եք 2023-ին:

-Չմանրամասնելով ասեմ, որ չի եղել նման ոչ անձնական խնդիր, որը լուծել եմ:

-Իսկ կա՞ մի բան 2023 թվականին, որի մասին հիշելիս ակամայից սկսում եք ժպտալ:

-Ոչ:

-Ամանորին ի՞նչ եք սիրում խմել՝ գինի՞, օղի՞, կոնյա՞կ, գուցե գարեջո՞ւր կամ վիսկի՞:

-Ճիշտն ասած, խմել չեմ սիրում, բայց եթե ինչ-որ առիթ լինում է, տարբերություն չկա: Քանի որ չեմ խմում հաճույք ստանալու, այլ պարզապես նշելու համար, միեւնույնն է, թե ինչ կլինի:

-Ո՞ւմ կամ ինչի՞ կենացն եք առաջինը խմում Ամանորի գիշերը:

-Առաջինը՝ խաղաղության, հետո նոր մնացածը՝ ծնողների, երեխաների: Հավաքվում ենք ընտանիքով ու խոսում ենք տարբեր բաներից, զրուցում ենք, քննարկում ենք անցնող տարին, որոշում, թե ինչ պիտի անենք եկող տարում:

-Կա՞մ ուտեստ, որն ասոցացվում է Ամանորի հետ:

-Իհարկե, թփով տոլման ու բլինչիկը: Բնականաբար, տարվա մեջ հաճախ պատրաստում ենք, բայց երբ ասում են՝ Նոր տարի, իմ մոտ զուգահեռվում են նաեւ այդ երկու ուտեստները: Նույնը՝ մանդարինը: Փառք Աստծո, հիմա բոլոր սեզոններին կա, չէ՞, բայց, միեւնույնն է, մենք Նոր տարին ու մանդարինը ասոցացնում ենք:

-Իսկ Ձմեռ պապիկին նամակ գրե՞լ եք արդեն:

-Այո՛, մտքումս: Ամեն տարի էլ գրում եմ:

-Ի՞նչ եք ուզել այս տարի:

-Չեմ կարող ասել. այս անգամ շատ բաներ եմ ուզել, որոնք, մեծ հաշվով, իմ անձից չեն կախված:

-Բայց խելոք պահե՞լ եք Ձեզ, ի՞նչ եք կարծում, կբերի՞ նվերները:

-Որոշ բաներ, կարծում եմ, կբերի, բաներ կան՝ ինձ թվում է՝ այսքան շուտ հնարավոր չի՝ բերի, բայց խոստացել է, ամեն դեպքում:

-Հաշվարկ ունե՞ք, թե ամանորյա ծախսերը ընտանեկան բյուջեից որքան գումար են տանում:

-Եթե անկեղծ՝ ոչ: Երբեք տեղյակ չեմ եղել, քանի որ գրեթե միշտ ամուսինս է այդ հարցերով զբաղվել, առիթ չեմ ունեցել տեղեկանալու: Բայց թեկուզեւ նրա գնումների պարագայում երբեք հաշվարկ չենք անում. այսօր սա էր հարմար գնելը, վաղը՝ մեկ այլ բան, այդ իսկ պատճառով հստակ թիվ ասել չեմ կարող:

-Այս տարի ինչ-որ յուրահատուկ կերպով նշելո՞ւ եք Ամանորը:

-Ոչ: Շատ ուրախ չեմ, որ ինչ-որ արտասովոր բաներ անեմ: Չեմ ուզում ստել: Երբ երեխաները փոքր էին, այն ամենը, ինչ հատուկ էր Ամանորին՝ Զյունանուշ, Ձմեռ պապ, ամանորյա տոնակատարություններ եւ այլն, արվում էր, բայց վերջին մի քանի տարիներին մարդկանց ներսը փոքր-ինչ փոխվել է, երեխաները մեծացել են, ինչ-որ բան անելու իմաստ էլ չկա: Ամեն դեպքում, ընտանեկան՝ նեղ անձնական մթնոլորտում նշելու ենք, տոնելու ենք սովորականի պես:

Այս տարի շատ պասիվ եմ եղել, ցանկությունս էլ մեծ չէր, քանի որ սրտներս նեղ էր. սա սուտ հայրենասիրություն չէ, այլ իրողություն: Նորմալ մարդը չի կարող անտարբեր անցնել այն ամենի կողքով, ինչ տեղի ունեցավ վերջին տարիներին՝ նույն պատերազմը, Արցախի կորուստը: Հիմա ոչ մի բան էլ առաջվանը չէ: Ինչքան պետք է քո մեջ մարդը մեռած լինի, որ այս ամենից հետո էլի քո էգոյի մասին մտածես: Չի լինում այդպես:

Բայց, սրան զուգահեռ, ապրել է պետք, կյանքը շարունակվում է, եւ սա պարզապես խոսքեր չեն:

-2024-ի նախաշեմին ի՞նչ կմաղթեք մեր ընթերցողներին, Ձեր հետեւորդներին, լսարանին:

-Ուզում եմ, որ բոլորս լավ լինենք: Մեր ժողովրդի, ազգի մեջից վերջապես այս չարությունն անցնի, կարողանանք խելքի գալ, ոտքի կանգնել, որ մեր պապերի ժառանգությունն ու պատմությունը, որը հասցրել են մեզ, մենք էլ, մի բռունցք դառնալով, միակամ լինելով, կարողանանք պահել:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԶԱՏՎԵՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Կառավարությունը դեկտեմբերի 14-ի նիստում որոշեց Սամվել Գասպարյանին ազատել պարտադիր զինծառայությունից:

Սամվել Գասպարյանը Հայաստանի Հանրապետության ծանրամարտի ազգային հավաքականի անդամ է, որին տարկետում է տրվել մինչեւ 26 տարին լրանալը, որի համար հիմք են հանդիսացել նրա հետեւյալ մարզական նվաճումները՝

- ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր,
- ծանրամարտի մեծահասակների աշխարհի 2022 թվականի առաջնության 3-րդ մրցանակիր:
- ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2023 թվականի առաջնությունում Սամվել Գասպարյանը դարձավ հաղթող՝ 1-ին մրցանակակիր,
- ծանրամարտի մեծահասակների 2023 թվականի սեպտեմբերին անցկացված աշխարհի առաջնությունում զբաղեցրեց 4-րդ տեղը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհրաժեշտություն է առաջացել պարտադիր զինծառայությունից ազատել Սամվել Գասպարյանին:

Նշենք նաեւ, որ Սամվել Գասպարյանը նախապատրաստվում է մասնակցելու 2024 թվականի Եվրոպայի ու աշխարհի առաջնություններին եւ ամառային օլիմպիական խաղերին:

ԴԱՎԹՅԱՆԸ՝ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

Միջազգային վարպետ Արթուր Դավթյանը դարձել է կայծակնային շախմատի Chessengland.com GM Festival FIDE Blitz մրցաշարի հաղթող:

Հայաստանի ներկայացուցիչը 14 հնարավորից վաստակել է 13 միավոր եւ 37 կետով բարելավել է կայծակնային շախմատում իր վարկանիշը. հաղորդում է ՀՇՖ-ի մամուլի ծառայությունը:

ԲԱՐՍԵՂՅԱՆԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Բրատիսլավայի «Սլովանի» հարձակվող Տիգրան Բարսեղյանը ճանաչվել է Սլովակիայի առաջնության 17-րդ տուրի լավագույն ֆուտբոլիստ. հայտնում է առաջնության պաշտոնական էջը:

17-րդ տուրում «Սլովանը» մրցակցի դաշտում 6-0 հաշվով առավելության էր հասել «Պոդբրեզովայի» դեմ խաղում: Հայ ֆուտբոլիստը կատարել էր երկու գոլային փոխանցում եւ իրացրել 11-մետրանոց հարվածը:

Ընթացիկ մրցաշրջանում 30-ամյա ֆուտբոլիստը Սլովայիայի առաջնությունում անցկացրել է 17 հանդիպում, խփել 7 գոլ եւ կատարել նույնքան գոլային փոխանցում:

«Սլովանը» 17 տուրից հետո վաստակել է 42 միավոր եւ գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՆՈՐ ԼՐԱՏՎԱԿԱՆ

Քանիե Ուեսթը գործարկել է YEWS լրատվական պլատֆորմը: Yews.News կայքը ներկայում հասանելի է միայն բջջային սարքերով եւ ունի երկու բացվող մենյու, որոնք ստացել են «Առավոտյան 10-ին» եւ «Կեսօրվա 3-ին» անվանումները:

Պլատֆորմը ներառում է հոդվածներ, որոնք վերաբերում են ռեփերին, նորաձեւությանը, քաղաքականությանը, սպորտին, փոփ-մշակույթին, տեխնոլոգիաներին եւ այլն: Հոկտեմբերի սկզբին հայտնի է դարձել, որ Ye-ն մի քանի ապրանքանիշների գրանցման հայտ է ներկայացրել «YEWS»-ի օգտագործման համար՝ ներառյալ նախագիծ/առարկաները կրթության, գովազդի, բանկային ծառայությունների, երաժշտության հոսքային հաղորդման, հեռուստատեսության, կոսմետիկական խնամքի, սննդամթերքների եւ ըմպելիքների, խաղերի, հագուստի, կոշիկի եւ այլ ոլորտների համար:

ԳԵՐԵՎԱՐՎԱԾԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 13-ին 2020-2023 թվականների գերեվարված Հայաստանի Հանրապետության 31 զինծառայողներ եւ սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում գերեվարված 1 զինծառայող հատել են հայ-ադրբեջանական սահմանը եւ գտնվում են Հայաստանում. այս մասին հայտնել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ նրանք նախ կանցնեն նախնական բժշկական հետազոտության եւ ապա կվերադառնան իրենց հարազատների մոտ: Փաշինյանը հրապարակել է նաեւ Հայաստան վերադարձած գերիների անվանացանկը:

Հայաստան վերադարձած ռազմագերիների թվում էր նաեւ Հրայր Հրաչի Հերաբյանը: Նա ծնունդով Շիրակի մարզի Աշոցք գյուղից էր:

Հրայր Հերաբյանի դատավարությունը վարել է Բաքվի ծանր հանցագործությունների դատարանի դատավոր Էլդար Իսմայելովը Բաքվի վերաքննիչ դատարանում: Նրան մեղադրանք էր առաջադրվել՝ Ադրբեջանի քրեական օրենսգրքի 214, 228, 279, 318 հոդվածներով, եւ նա դատապարտվել էր 6 տարի ազատազրկման: Հոդվածների համաձայն՝ Հրայրին մեղադրանք էր առաջադրվում «ահաբեկչության եւ դիվերսիայի համար»: Ըստ ադրբեջանական կողմի՝ 2020 թվականի նոյեմբերի 26-27-ն ընկած ժամանակահատվածում իբրեւ նա հատել է Ադրբեջանի պետական սահմանն ու Հադրութի հյուսիս-արեւմտյան հատվածի անտառային տեղանքում մարտական դիրքեր զբաղեցրել, այնուհետեւ՝ մինչ դեկտեմբերի 13-ը, զինված հարձակումներ իրագործել:

● Դեկտեմբերի 16-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Խաչատրյան Ֆեստ 11. Աստղիկ Սիրանոսյան եւ Ջանլուկա Մարչիանո» համերգը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԹՌԻՉՔՆԵՐ

ՀԱՐՑ. Flyone-ից տոմս եմ գնել, բայց ուզում եմ հետ սալ կամ գոնե օրը փոխել. ինչպե՞ս կարող եմ անել դա:

Արմեն Սերոբյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր www.flyone.eu կայքով առցանց գնված ավիատոմսը չեղարկելու կամ որոշ տվյալներ փոխելու համար ընտրե՛ք Ձեզ հարմար եղանակը՝

- MyBookings-ից մուտքագրելով պատվերի/ավիատոմսի համարը եւ Ձեր ազգանունը՝ սեղմե՛ք «Գտնել պատվերը» կոճակը: Ձեր պատվերի վերաբերյալ տեղեկատվությամբ «Տոմսերի փոխանակում» կոճակը հասանելի է էջի ներքեւում:
- «Իմ FLYONE» օգտահաշվից գործընթացը նման է նախորդին. անհրաժեշտ է միայն մտնել օգտահաշիվ կամ ստեղծել Ձեր անձնական օգտահաշիվը, եթե այն բացակայում է: Կապ հաստատե՛ք մեզ հետ «Հետադարձ կապ» բաժնում հետադարձ կապի միասնական ձեւի միջոցով՝ բոլոր անհրաժեշտ դաշտերը պարտադիր լրացնելու պայմանով:

Flyone Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավիատոմսի չեղարկումը կամ տվյալների փոփոխությունը կատարվում է կիրառվող սակագնի կանոններին համապատասխան, ինչը որոշ դեպքերում ենթադրում է տուգանքների կիրառում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ե՞րբ է կազմակերպվում առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը:

Արփա Մադոյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առկա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները ԵՊՀ-ն դիմորդներին ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամ, 87 կգ քաշային Հռիփսիմե Խուրշուդյանը ոսկե մեդալ է նվաճել Կատարի մայրաքաղաք Դոհայում ավարտին մոտեցող ծանրամարտի Գրան պրիում երկամարտի 232 կգ արդյունքով (106 + 126 կգ):

«Պոկում» եւ «Հրում» վարժություններում էլ հայ մարզուհին արժանացել է փոքր արծաթե մեդալների՝ գլխավերեւում պահելով համապատասխանաբար 106 եւ 126 կգ կշռող ծանրաձողերը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	-2 -5 / +2 +7
Կոտայքի լեռներ	-2 -4 / +2 +5
Կոտայքի նախալեռներ	0 +2 / +6 +9
Գեղարքունիք	-2 -3 / +4 +5
Լոռի	-1 -3 / +10 +12
Տավուշ	0 +3 / +8 +11
Արագածոտնի լեռներ	-3 -5 / +2 +4
Արագածոտնի նախալեռներ	+2 +5 / +5 +9
Արարատ	0 +3 / +7 +10
Արմավիր	+2 +5 / +8 +10
Վայոց ձորի լեռներ	0 -3 / +2 +4
Վայոց ձորի նախալեռներ	+3 +6 / +9 +11
Սյունիքի հովիտներ	+4 +6 / +7 +10
Սյունիքի նախալեռներ	+1 +3 / +4 +7
ԼՂՀ	+2 +4 / +4 +6
Երեւան	+3 +5 / +6 +8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*